

ՈՉ ԳՐԱԿԱՆ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ «ԱՌԱՎՈՏ» ԹԵՐԹՈՒՄ

Մեր օրերում, հատկապես քաղաքական այս լարված ու բարդ իրավիճակներում, հասարակությունը հաճախ է օգտվում մամուլից, և շատ կարևոր է, որ նրա լեզուն լինի գրական-գրքային, հասկացվի ընթերցողի կողմից։ Սակայն, ցավոք, մամուլում, մասնավորապես «Առավոտ» թերթում, գրական, խոսակցական և ոչ գրական բառապաշարի սահմանները երբեմն չեն տարրորոշվում, և դժվար է դրանք տարբերակել։

Մեր հոդվածում ուշադրություն ենք դարձրել «Առավոտ» թերթի ոչ գրական բառապաշարին, որը պրոֆ. Ֆ.Խլղաթյանն անվանում է խոսակցական հատուկ բառապաշար /Գ.Բ.Ջահուկյան, Ֆ.Գ.Խլղաթյան, Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան 2007, էջ 42/։ Ոչ գրական /հատուկ/ բառապաշարի մեջ մտնում են ժողովրդախոսակցական բառերը, բարբառաբանությունները, գոեհկաբանությունները, հասարակաբանությունները, ժարգոնային բառերը, օտարաբանությունները և այլն։ Ցավալի է, որ ոչ գրական բառապաշարով այսօր խոսում են ոչ միայն հանցագործ խավի ներկայացուցիչները, այլև երիտասարդության և, որ ամենացավալին է, իշխանավորների մի մասը։ Հատուկ բառապաշարը գործածվում է մամուլում ամենատարբեր ոճական նպատակներով։ Երբեմն լրագրողներն անհարկի կերպով գործածում են այդ բառերն ու արտահայտությունները, որպեսզի ավելի կարևորեն արծարծվող նյութը, գրավեն ընթերցողի ուշադրությունը։

Հայերենի բառապաշարը բաժանվում է գրական և ժողովրդախոսակցական շերտերի, որոնք համաժողովրդական լեզվի տարբեր դրսևորումներն են։ Սրանցից յուրաքանչյուրին հատուկ են մի շարք հատկանիշներ։ Օրինակ, գրական խոսքը պետք է լինի ամբողջական, պահպանի գրական նորմերը, այնինչ ժողովրդախոսակցական լեզուն աչքի է ընկնում իր յուրահատուկ հնչերանգով, այնքան էլ մշակված չէ, չի համապատասխանում գրական օրենքներին և այլն։

«Առավոտ» թերթում բավականին շատ են ժողովրդախոսակցական լեզվի դրսևորումները։ Օրինակ՝

«Ռ.Հախվերդյանն էլ նշեց. «Մեր վրա քաշել ենք դիմակը, իբր ջագային հանրապետություն ենք, մինչդեռ քաղաքը նախընտրում է ռաբիսը» /«Ռուսաբժնանք՝ ըստ Հախվերդյանի», 2010/03/06/։

«Ես ասել եմ, եթե իմ հետ ինչ-որ բան պատահի՝ կհնչեցվեն անուն-ազգանունները» /«Սիայն ասել եմ՝ զգույշ եղի՞ր», 25/3141/9 փետրվար 2008/։

«...մի բաժնի վարիչ ունեինք. ասում էր՝ Փայլուն, ինձ քո էդ աչքերով մի՛ նայիր, դե ես էլ մանուշակագույն աչքեր ունեմ: ...Հիմա շատ եմ կռացել, ծմեռները գազ չունեի, ցրտից եղավ, էնքան կուչ եկա՝ մինչև կռացած մնացի» /«Եվրոպա դառնալը մաքուր փողոցներից պետք է սկսել», 2010/04/13/:

«Կարծես թե բանակի վրա ես վերջերս ոնց որ, էն որ ասում են, է, աչքով տվեցին, ինչ արեցին» /«Ձգել վիստերը», 2010-11-26/:

Ժողովրդախոսակցական լեզվում վրա, մոտ, պես, հետ, նման և այլն կապերն անձնական դերանունների առաջին և երկրորդ դեմքերի հետ գործածվելիս պահանջում են սեռական հոլով, որը գրական լեզվում շեղում է համարվում: Գրական լեզվում նշված կապերը կապակցվում են անձնական դերանունների տրական հոլովի հետ՝ **ինձ մոտ, ինձ նման, քեզ պես և այլն:**

Ժողովրդախոսակցական լեզվում կիրառվում են **ես, էդ, էն** և սրանցով բաղադրված բառերը՝ **եսպես, էդպես, էսքան, էնքան, էնտեղ** և այլն, գրական լեզվի այս, այդ, այն և դրանցով կազմված **այսքան, այդքան, այնքան, այսչափ, այդպես** և այլն ձևերի փոխարեն:

Ժողովրդախոսակցական լեզվում բաղադրյալ ստորոգյալի երրորդ դեմքի հետ իբրև հանգույց կիրառվում է **ա-ն**՝ գրականի **է-ի** փոխարեն: Օրինակ՝

«Արա՛, **եսօրվա** օրով չկարողացա՞ր մեկից ավտո /փոխառություն/ **ճարեիր** /բարբառաբանություն/, **կարո՞ղ** **ա** քո պատճառով 10-ի «ա»-ից հետ մնամք» /«ճոխ ծաղիկներով, մի քիչ թաց աչքերով», 2010/05/25/:

Աղբիկ, տղա, երեխա գոյականները գրական լեզվում հոգնակին կազմում են **-ներ** մասնիկով, մինչդեռ ժողովրդախոսակցականում՝ **աղբիկը, տղերք, երեխեք** և այլն: Օրինակ՝ «Շատ գեղեցիկ երկազմակերպված, **երեխեքն** էլ լավ ներկայացրին, երևում էր՝ բոլորով տանջվել էին, որ այսօր լավ ելույթ ունենային...»:

«Մեր դպրոցը **էնքան** լավն ա, որ դպրոցի սաղ /բարբառաբանություն/ լավ **տղերքը չոկա** /օտարաբանություն/ ունեն» /«ճոխ ծաղիկներով, մի քիչ թաց աչքերով», 2010/05/25/:

Ժողովրդախոսակցական բառաշերտը մամուլում գործածվում է ոճական նկատ առումներով: Այն խոսքը դարձնում է անմիջական ու մտերմիկ, այդ պատճառով էլ հաճախ դառնում է լրագրային լեզվի անբաժանելի մասը:

«Առավոտ» թերթում շատ են հանդիպում դարձվածքներ: Սրանք լրագրողի խոսքը դարձնում են հարուստ ու բովանդակալից: Հայերենի դարձվածքների ճնշող մեծամասնությունը բարբառային ծագում ունի և, բնականաբար, իր մեծ մասով պատկանում է ժողովրդախոսակցական շերտին: Սրանք տարբերվում են գրական կամ գրքային դարձվածքներից, որոնք մեզ են հասել գրաբարից կամ էլ փոխառություններ են: Դարձվածքներ օգտագործելով՝ լրագրողն ավելի պատկերավոր ու համոզիչ է դարձնում իր ասելիքը: Օրինակ՝

«Եղան նաև անկեղծ խոստովանություններ ուսուցիչներին, քե «շատ ենք ծեր կյանքը կերել» /«Վերջին զանգը» հատուկ դպրոցում», 2010/22/05/:

«Էդուարդ Շարմազանովն ասաց նաև, որ «Թուրքիան լավ կլինի քիթը չխոթի դարաբաղյան հարցի կարգավորման գործընթացի մեջ...» /«Բացահայտ անգրագիտություն և լկտիություն», 2010/04/14/:

«...քիչ էր մնում ընկնեինք տիկին Սվետայի մեդիտացիայի «ջրերը» և մահարիշցի դառնալու ծանապահը բռնեինք» /«Աղանդ՝ կրթական քողի տա՞կ», 16/05/2010/:

Ինչպես բառերը, այնպես էլ դարձվածքները օժտված են հուզաարտահայտչական երանգավորմամբ: Մեծ է նրանց դերը խոսքի մեջ. քանի որ նրանք խոսքին տալիս են կենդանություն, պատկերավորություն, արտահայտչականություն: Օրինակ՝

«...խելոք մարդը թացը չորից կարողանում է տարբերել, մինչդեռ «խելոքները յոթ մոր կաթ են ուտում» /«Թագավորն ապրած կենա», 2009/06/17/:

«Ի լուր շահարկողների հայտարարում եմ, որ Հ.Ղազանյանը խելքը հացի հետ չի կերել, որ շենք վաճառի...» /«խելքս հացի հետ չեմ կերել», 2010/05/04/:

Ինչպես վերը նշեցինք, ոչ գրական /հատուկ/ բառապաշարի մեջ մտնում են նաև բարբառաբանությունները: Դրանք այն բառերն ու արտահայտություններն են, որոնք պահպանել են իրենց տեղական երանգը և գործածվում են գրական լեզվում:

Բարբառաբանությունները լրագրային խոսքում, հատկապես «Առավոտ» թերթում, համեմատաբար քիչ են գործածվում: Օրինակ՝ «Ցուցահանդես՝ նվիրված «Գալա»-ին հողավածի հեղինակը իր խոսքում գործածում է բարբառային բառեր՝ արտահայտելու համար իր դիրքորոշումը նկարագրվող իրողության նկատմամբ: Նա դրանով ընթերցողին է փոխանցում իր բացասական վերաբերմունքը:

«...իսկ Գյումրիի բաղաբապետ Վ.Ղուկասյանի լուսանկարի տակ գրված է նրա հայտնի նախադասությունը. «Ես զգվիմ զը «Գալա»-ից» /2008/10/15/:

«Ռ.Խաչատրյանը հիասթափվել է ամուսնություններից: Ասում է. «Ռվ է խերվել, որ ես խերվեի» / «Խաբվում են, լքվում կամ էլ բաժանվում» , 2010/03/06/:

«Ականջը կանչի Բրայզայի, միշտ ինքն էր ասում՝ հեսա-հեսա Ղարաբաղի հարցը լուծվելու է» /«Ականջդ կանչի, Բրայզա», 2010-05-04/:

«Սովետի ժամանակ էլ նույնն էր. հայերը ազգովին ամեն օր ժամը 5-ին ռադիոյով Բաքուն էին «քոքում» ու խում աղոթեջանցիներին»,- ասում է Զիլոն» /«Ռուսաքծնանք՝ ըստ Հախվերդյանի», /2010/03/06/:

Այս օրինակներում օգտագործվել են բարբսուային բառեր ոճավորման նպատակով, որպեսզի գեղարվեստական խոսքում անձանց կերպավորեն ու անհատականացնեն:

Բարբառային շերտի որոշ բառեր ժամանակի ընթացքում աստիճանաբար անցնում են ժողովրդախոսակցականի մեջ: Բարբառային և ժողովրդախոսակցական բառերը իրարից տարբերվում են հիմնականում երկու հատկանիշով՝ տարածվածությամբ և գործածության հաճախականությամբ: Բարբառային բառերը օգտագործվում են տվյալ տարածքում, տեղայնացված են, իսկ ժողովրդախոսակցական բառերը տեղայնացված չեն, ավելի լայն ընդգրկում ունեն: Հետևաբար՝ բարբառային բառերը քիչ են օգտագործվում, իսկ ժողովրդախոսակցականները ունեն հաճախադեպ կիրառություն: «Առավոտ» թերթում նույնպես նկատվում են նման օրինակներ:

«Իսկ դասդեղը իրեն սառն էր պահում՝ ասելով. «Ես նրանցից կպրծնեմ, իրանք՝ ինձանից» /«Ղասդեկին մոռացան դպրոցում», /2010/05/25/:

«Հոչակեց ու դարձավ իր իսկ արտահայտության գերին, որն ինձ այսօր հիշեցնում է իմ հրաշալի ընկերոջ, քեֆը լավ ժամանակ, իր մայրիկին ասած մի... պատմություն» /«Նարդու և շախմատի արանքում», 2010/02/05/:

Ժողովրդախոսակցական շերտի բառերի մի մասը երբեմն նույնանում է բարբառայինի հետ, և դժվարանում է դրանց տարբերակումը: Օրինակ՝

«Այսինքն՝ խնդիր է դրվում ոչ թե բարձրացված հարցը քննարկելու, այլ դիմացինին շշպոելու, ջախջախելու և լռեցնելու» /«Հակազդելու ձևը», /2010/10/05/:

«Ես կտակում եմ իմ զավակներին, թոռներին ու ծոռներին՝ ազնիվ աշխատանքով ապրել և հարամ հաց չուտել» /«Մանկավարժի կտակը», /2010/05/06/:

Ծնողներս ինձ պատգամել են նամուսով ապրել, աննամուս արարքը վաղ թե ուշ քեզ կհիշեցնեն» /«Թագավորն ապրած կենա», 2009-06-17/:

Երբեմն էլ ժողովրդախոսակցական որոշ բառեր թափանցում են գրական լեզվի մեջ, չնայած նրանց համարժեքներն ունեն լայն կիրառություն գրական հայերենում: Ղա արվում է հեռոսների խոսքը ավելի տիպականացնելու նպատակով կամ որպեսզի տվյալ երևույթը ավելի պատկերավոր լինի: Օրինակ՝ «...դահլիճի վերջում կանգնած իրենց «ուզած աղջկա» կամ «լավ ախպոր» ելույթին սպասող տղաները արծազանքում էին սուլոցներով, ականջ խլացնող ծափահարություններով » /«Ճոխ ծաղիկներով, մի քիչ թաց աչքերով», 2010/05/25/:

Ոչ գրական բառապաշարի մեջ են մտնում նաև ժարգոնային բառերն ու ծածկաբանությունները, որոնք տարբերվում են բարբառաբանությունից: Ղրանք գործածվում են հասարակությունից մեկուսացած զանազան խմբերի կողմից, որպեսզի ուրիշներին անհասկանալի մնան: Ժարգոններն իրենց մեջ

պարունակում են տարբեր լեզուների պատկանող բառեր, հիմնականում՝ ռուսերեն: «Առավոտ» թերթի էջերում կարդում ենք մեծ թվով ժարգոնային բառեր, ինչպես՝ ռազբորկա, բարդակ, պիժոն, հաբրգել, դաբրո, աբիժնիկ և այլն: Ժարգոնային բառերը լրագրային խոսքին համապատասխան երանգ են հաղորդում, ռժավորում են խոսքը: Մասնավորապես հասարակական-քաղաքական ուղղվածություն ունեցող լրագրանյութերը լեցուն են ժարգոնային բառերով ու արտահայտություններով: Օրինակ՝

«Պարզ չէ, որ ընտրություններն այդ երկրում անցել են ազատ ու քափանցիկ, իսկ տանգանիական «ուզլավիկները» կամ անօրինական զինված խմբավորումները այս գործընթացին որևէ ձևով չեն մասնակցել» /«Բուշմենները և մենք», 2010/09/05/:

«Ռազբիրատ անելու իրավունք ունեն օրենքով գաղերը, ոչ թե մաֆիոզները, որ մեր ԱԺ-ում նստած՝ 10-րդ դասարան էլ չեն ավարտել...»/«Թագավորն ապրած կենա», 2009/06/17/:

«Ռազբորկայի» պատճառը, ըստ «Առավոտի» տեղեկությունների, չվերադարձված պարտքն էր՝ 22.000 դոլարը» /«Խոշոր ձկները փախել են», 2010/04/21/:

«Այդ «բլեֆի կուտը» մարդիկ կերան. այ, այստեղ էր մեր բառադիւթյունը, անկազմակերպվածությունը, ներքևի օղակների հետ աշխատելու անկարողությունը» /«Քյաբաբ ուտելով՝ չես շահի», 2009-06-12/:

«Առավոտ» թերթի շատ հոդվածների վերնագրերում գործածվում են ժարգոնային բառեր՝ ոչ իրենց ուղղակի, այլ փոխաբերական իմաստներով: Դենց արդեն վերնագրից ընթերցողին է փոխանցվում լրագրողի վերաբերմունքը նկարագրվող անձի կամ երևույթի նկատմամբ: Օրինակ՝

«Խաղալիքները «ցրել» են» /2010/01/13/:

«Փախած» երաժշտություն՝ «փախած» փառատոնում» /2010/10/26/:

«Կառուցապատողը փորձում է «սաղացնել» /2010/06/09/:

«Դատավորը նաև «ուռող» է» /2010/10/29/:

«Լոմբարդի աշխատակիցը՝ «քցող» /2010/09/10/:

Ոչ գրական բառապաշարի հաջորդ շերտը գոեհկաբանություններն են: Դրանք այն բառերն ու արտահայտություններն են, որոնք ունեն բացասական արտահայտչական երանգ, կոպիտ են ու գոեհիկ: Գոեհկաբանություններին են պատկանում վիրավորական բառերն ու արտահայտությունները, հայիոյանքները և այլն: Եթե գրքային լեզվում գոեհկաբանությունների գործածությունը մերժելի է, ապա լրագրության մեջ այն ունի յուրօրինակ ռժական կիրառություն: Լրագրողը, օգտագործելով գոեհիկ բառեր ու արտահայտություններ, ընդգծում է իր դիրքորոշումը, ստեղծում է կարծիք՝ նկարագրվող անձի կամ երևույթի նկատմամբ:

«Առավոտ» թերթի լեզուն ևս գերծ չէ գոեհկաբանություններից: Օրինակ՝

«Սակայն ԳԱՍ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանն արձանագրեց. «Թքած ունենան հանրային կարծիքի վրա» /«Լեզուն գույք չէ պարտքի դիմաց», 2010/03/06/:

«Մի պահ գեղանկարչական ծառուղին լցվեց աղմուկ-աղաղակով, ճղրտյուններով, հայիռյանքների, քֆուր-քյաֆարի տարափով» /«Երևանյան միջօրե», 2010/06/04/:

«Աշոտյանի ռիսկը բո՞ղկ էր՝ գար. մի այնպիսի ցույց էինք անելու այստեղ...» /«Թեստ գրողը նաև կրկնուսույց է», 2010-06-09/:

Լեզվում կան մի շարք բառեր, որոնք գոեհկաբանություններ չեն, բայց նույնպես ունեն կոպտության երանգ: Դրանք հասարակաբանություններ են, որոնք նույնպես մտնում են ոչ գրական բառապաշարի մեջ: Հասարակաբանությունը հատուկ է բարբառախառն խոսակցական լեզվին:

«Առավոտ» թերթում հաճախ լրագրողները ընթերցողի ուշադրությունը գրավելու, որևէ անձի, երևույթի նկատմամբ բացասական վերաբերմունք ցույց տալու համար գործածում են գոեհկաբանություններ կամ հասարակաբանություններ: Օրինակ՝ «Իրականում Հայաստանում ցանկացած մեծ տոն պահ-զապես առիթ է ամենաանկապ «գրթուզիքիները»՝ «տզզիկ, պզզիկ», փուչիկ և այլն, մի քանի անգամ բարձր գներով վաճառելու, օդից զումարներ աշխատելու համար» /«Հունիսի 1-ը մանուկների հիասթափության օր», 2010/03/06/:

«Այստեղ կարելի է անել երկու ենթադրություն. կամ նրանք ունեն մեզ համար ինչ-որ անհայտ նպատակներ, կամ էլ իրենց գործողություններով առաջնորդվում էին իրավիճակային լուծումներով, և, թող ներքի ասել, «բառադիությանը» /«Կա՞ն գաղտնի քայլեր», 2008/10/15/:

Որոշ գրական բառեր, որոշակի խոսքաշարում գործածվելով, նույնպես կարող են ստանալ հասարակաբանական երանգ և գործածվել ոչ իրենց բուն, այլ փոխաբերական տարբեր իմաստներով: Օրինակ՝

«Մարդիկ շինաստանից աղբ են բերում ու վաճառում» /2010/06/04/:

«Պարզ է, որ մենք ծանոթով կամ կաշառքով փորձելու ենք մեր երեխաներին խցկել այդ «լավ» դպրոցները» /2010/06/06/:

Ոչ գրական բառապաշարի հաջորդ շարքը օտարաբանություններն են: Դրանք այլալեզվյան բառեր ու արտահայտություններ են, որոնք, չնայած ունեն իրենց համարժեքները մայրենի լեզվում, անհարկի գործածվում են: Սյուսո մամուլը, ցավոք, ողողված է օտար բառերով: «Առավոտ» թերթը նույնպես բացառություն չէ: Լրագրում օտարաբանությունների միտումնավոր կիրառումն ունի ոճական նշանակություն: Հեղինակը քննադատում է հասարակության որևէ մերժելի երևույթ, վարքագիծ, իր հեզմական վերաբերմունքն է արտահայտում օտարամետ քաղաքականության նկատմամբ: Օրինակ՝

«Պիառ տեխնոլոգիաների մասնագետների ու իմիջմեյքերների հիմնական ջանքերն ուղղված էին մեծ խարիզմատիկների հոգեբանական հմտություններն ընդօրինակելուն» /«Իշխանությունը ծանրագույն սթրես է» /2008/02/14/:

«Հասկանալի է, որ դա արվում է ռեստորաններն ու դաշանները պահպանելու համար: ...Պետությունը մտածում է մի քանի հոգու մասին՝ արհամարհելով մի ողջ լճի պորբլեմ» /«Սևանից երեք մի պետս «դաշանների», 146/3012/2 օգոստոս 2007/:

«Այդ պատճառով էլ հայ տուրիստները գերադասում են հանգստանալ Սև ծովի ափին և լցնել Վրաստանի բյուջեն» /«Մեր հանգստյան տներն անհասանելի են», 21 սեպտեմբեր 2007/:

Օտարաբանությունը պետք է տարբերել փոխառությունից: Փոխառությունը այն երևույթն է, երբ լեզուն իր չունեցած բառը կամ արտահայտությունը վերցնում է այլ լեզվից: Եթե մենք ունենք օտար բառի համարժեքը, ապա խորախոսելի չէ նրա օտար տարբերակի օգտագործումը:

Օրինակ՝ «Ամեն դեպքում՝ աշխատում ենք անգամ Հայաստանի նեգատիվ երևույթները մեղմ ներկայացնել» /«Մայան վերադարձել է Նյու-Յորքից», 2008/10/16/:

«Այդ հիվանդանոցները միջազգային չափանիշներին լիարժեք համապատասխան են, որովհետև արդեն ունեն... դիագնոստիկ լավագույն սարքավորումներ» /«Սալիկներից, ներկերից սկսած՝ նախագահի հետ համաձայնեցնում ենք», 2010/04/29/:

«Հունվարին Իլինոյսի օրենսդիրները պաշտոնաճկ են արել Բլազոկիչին, քանի որ հիմնավոր են համարել նրա հասցեին կոռուպցիայի մեղադրանքները: Քաղաքական գործչի շուրջ սկանդալը մեծ արձագանք է գտել...» /«Նախկին նահանգապետը կմասնակցի մյուզիքլին», 2009/06/11/:

Օտարաբանությունը երբեմն օգտագործվում է ավելի ընդգծելու, շեշտելու երևույթի բացասական լինելը կամ էլ կարող է ունենալ հեզմական բնույթ: Օրինակ՝ «Ամեն մի «ախրաննիկ» չի կարող թիկնապաի լինել... Իրեն հարգող ոչ մի մարզիկ երբեք «ախրաննիկ» չի դառնա» /«Թագավորն ապրած կենա» /2009/06/17/:

Լեզվի մաքրության համար շատ վտանգավոր են քերականական օտարաբանությունները, որոնց օտար լինելը միանգամից չի նկատվում: Օրինակ՝

«Մարշալ Բաղրամյան պողոտայի տրանսպորտային ծանրաբեռնվածությունը թեթևացնելու մասին խոսակցությունները գնում են անցյալ դարի 70-ական թվականներից» /«Վատագույն ավանդույթները շարունակվում են», 2008/01/26/:

«Որպես լրատվամիջոցների կոռումպացվածության գլխավոր դրսևորում՝ գործարարները նշել են պատվիրվածիողվածները» /«Մամուլը կանանց պես է», 2007/09/21/:

«...Արտառոց կամ աժիտաժայն միջադեպեր չեն գրանցվել» /«Գնահատականների իջեցումները շատացել են», 146/3012/2 օգոստոս 2007/:

«Աշխատանքները պարալիզացվում են վարչապետի պատվի՞ն» /29/3145/15 փետրվար 2008/:

«Առավոտ» թերթի շատ հոդվածների վերնագրերում նույնպես հանդիպում ենք օտարաբանությունների: Լրագրողները հաճախ սովորական բառը, արտահայտությունը հենց վերնագրում փոխարինում են օտար բառով, որպեսզի անմիջապես գրազեն ընթերցողի ուշադրությունը և նրան փոխանցեն իրենց վերաբերմունքը: Օրինակ՝

«Սովետի հոտը» /2010/10/27/:

«Սկանդալ Եհեսվ մոնիտորինգի հանձնաժողովում» /2010/01/28/:

«Ռեպլիկներ Նաիրա Զոհրաբյանի ելույթների շուրջ» /2010/01/28/:

«Ղալոցական «բեզարեդել» /2010/10/22/:

«Ախրանցիկները» չեն տալիս իրենց տերերի անունները» /2004/10/08/:

«Բլոկադայի» հետևանքները» /2004/10/12/:

«Ռեանիմացիայի» «անոմալիաները» /2010/09/10/:

«Պակազուխա» և իրականություն» /2010/11/02/:

«Ղեղավչինա» չէ, գաղութի օրենքներն են» /2010/11/26/:

Մամուլի լեզուն հրապարակախոսական ոճի է: Հետևաբար՝

1. այն պետք է գերծ լինի ոչ գրական բառապաշարի անհարկի օգտագործումից,

2. չպետք է շեղվի գրական նորմաներից,

3. ոչ գրական /հատուկ/ բառաշերտի բառեր, արտահայտություններ և դարձվածքներ պետք է օգտագործի միայն ոճավորման, խոսքը ավելի արտահայտիչ, պատկերավոր դարձնելու նպատակով:

Օգտագործված գրականություն

1. Բարսեղյան Հ.Խ., Հայերեն ուղղագրական, ուղղախոսական, տերմինաբանական բառարան, Երևան, 1973թ.

2. Գալստյան Հ., Լեզվական առօրյա հոգսեր, Երևան:

3. Խլղաթյան Հ.Հ., Ժամանակակից հայոց լեզու, մաս Ա, Երևան, 2009թ.:

4. Խլղաթյան Հ.Հ., - Ժամանակակից հայոց լեզու, մաս Բ, Երևան, 2010.թ.:5. Խլղաթյան Հ.Հ., Տիոյան Ս., Ակնարկ հայերենի ուղղախոսության, Երևան

6. Ղուկասյան Հ., Արդի հայ մամուլի լեզուն /ատենախոսություն/, Երևան

7. Ջահուկյան Գ.Բ., Խլղաթյան Հ.Հ., Հայոց լեզվի ոճաբանություն, Երևան, 2007թ.:

8. Պողոսյան Պ.Ս., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Երևան, 1990թ.:

9. Սուքիասյան Ա.Մ., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1982թ.:

10. Սուքիասյան Ա.Ս., Գալստյան Ս.Ա., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975թ.:

11. Օհանյան Հ.Ա., Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Երևան, 1982թ.: